



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

W4.





1857

2004

Հիւ օպերա կոմիտ չ Հայաստան

Վահագին
Հ. Ա. Տ. Ա. Տ. Ա. Տ.

№ 1022 մայ 18 - 1857 թագ



ԱՐ Զ Ա Կ Ե Ւ Չ Ա Փ Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն

Ա շ ա լ ա մ ա լ ա լ թ ի ւ ն ն ե ր ը :

№ 4.

Գրէ՛ այնպէս, ինչպէս-որ խօսում են,
և խօսէ՛ այնպէս, ինչպէս-որ գրում են:

Կառամզին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ

Յակով Լքոնսկի տըպարանումը:

1857.

3445

Արքունիկ
339

Ա Կ Ր :



Բ ա ր ի լ ս ը ա տ :

(Վուէր Գյաբրիէլ Պատկանեանին).

Դեռ չի գլրած առաջ դու լաւ միտք արա՛, —
Ովկ և խեղձիդ գրուածները առնողը,
Չետոյ՝ եւ այն մասին փոքր ինչ հոգս արա՛,
Որ քեզ սիրէ քու յարգելի կարդողը :

Դու սց եզկու հանգամանքը լաւ յիշէ՛,
Քու քանքարի վըրայ շատ յոյս մի՛ դընիլ,
Վզիր, թէկ'ուղ լսորենացի, Լըզիշէ՛, —
Զըսիրելով քեզ՝ գըգերըդ չ'են գընիլ

Գոքիդ մէջը պարսաւանիք մի՛ տալ չային, —
Հայը Խըրատ (թէ եւ խելոք) ատում է,
Մի՛ ծիծաղիլ նորա տըլսմար գործերին,
Որ նա աւանդ հօրենական կարծում է:

Մի՛ դու չային իր խոր քըմէն արթնացնիլ
Բարոյական քունը նորա անուշ է,
Կամ անցեալը նորա առաջ մի՛ բացիլ, —
Աշոյ անցեալը նորա աչքին սուր վուշ է :



339-2004

(4253
41)

Ճ. 339

Գովէ՛ նորա այն սխրալի արարքը ,
Որ խեղճ՝ այը երազումն-էլ չի արել ,
Նորա ամոք բընութիւնը ու բարքը , —
Առաջ պարծանքը այերի խելքն է տարել :

Գու՛ , — թէկ'ուղ լեզուդ լինի Անսկրիտին ,
Հայը շատ ուշկ կարդացածին չի գընում ,
Կա լըսում է մի քանիսի դաստիւնքին ,
Թէ ի՞նչ կերպով պարոն Օհանն է դասում .

Օհաններն են Հայոց դաստիւնց փորձաքար ,
Որոնց Խօսքը ու վըճիու անփոփուս
Միշտ մընում են նոցա համար դարէ դար , —
Օհաններին քեզ սիրել տուր , խեղճ՝ գըրող :

Այդ երկնաձիր քու քանքարը ի՞նչ օգուտ ,
Թէ Խօսածը անապատի բարքառ է ,
Հայի համար քու ասածը խիստ է մուժ ,
Կորա սիրտն-էլ քու գդացմանցը սառ է .

Առ'ու ըսփոփանք , թէ դու կարծես , որ մի օր
Կա կըսթափի իր դարեւոր խոր քընէն ,
Թարմ' զօրութիւն հոգու մէջն ու կեանք նոր
Պիտի վաղին երբէք նորա երակէն :

Եւ դու , Պովէտ , ընկճուել ես , վըհատել ,
Երկինք թողած՝ երկլըռում ես քարշ-դալի ,
Աերել գիտես , — գիտցի՛ր գիտցի՛ր դու ատել ,
Ի՞նչոր հոգիդ վրկայում է ատելի :

Դու նըմանի՛ր աղատախօս թոշնակին ,
Որ երգում է անանձնասէր յոյսերով ,
Ինչո՞ւ ձիբքը քու երկնային ու հոգին
Օքաղացնում ես երկրի չնչին գործերով :

Եղուի համար ի՞նչ օգուտ ունի թարգմանութիւնը :

Թարգմանութիւնը հարստացնում է լեզուն : Որովհետեւ մէկ աղդ միւսից ջոկուած , բաժանուած է երկիրով , քաղաքական կառավարութիւնով , բարքով , պէսպէս ծէսերով , եւ այն , նոցա լեզուներն-էլ անպատճառ շատ կամ սակաւ պիտի տարբերին մին մինից . աչա՛ այդ տեղ խիստ օգնում է թարգմանութիւնը , որ մեզ ծանօթացնում է օտար սպակերի գաղափարներու եւ այն նըշաններու հետ , որոնցմով յայտնում են նոքա իրանց միտքը : Թարգմանութիւնն միջոցով լեզուի մէջ կամաց կամաց մըտնում են զանազան դարձուածներ , ձեւեր , ոճեր , որ առաջի անդամ՝ խիստ օտար են թըլում մեզ , բայց յետոյ ականջները ընդելանում են , եւ վերջապէս լեզուն սեպհականում է նոցա :

Եթէ մի լեզու այնքան հարուստ է , որ կարողանում է հեղինակի ամենայն գաղափարներին՝ իւր հիւթերից սընունդ տալ՝ այդ ժամանակ աւելորդ է , եւ միանգամայն ծիծաղելի բան է , երբ-որ հեղինակը ուղենայ գլխից իւրահնար դարձուածներ դուրս-տալ . այդ կ'նշանակէ , որ նա ունայն տեղը ծանրաբենում է լեզուն : Ընդհակառակն՝ երբ-որ մենք ուզում ենք օտար լեզուից մի բան թարգմանել՝ ջանք պիտի դընենք որքան կարելի է մօտենալ ո՛չ թէ միայն թարգմանելի հեղինակի ցամաք բառերու նըշանակութեանցը , այլ նորա ամենամանը իմաստները պարզ եւ հասկանալի կերպով թափել մեր լեզու՝ ամենեւին չ'խանգարելով նորա յըտակութիւնը , եւ միշտ հետեւելով նորա ընդհանրապէս լեզունած կանոններուն :

Հեղինակը նըման է ժրածան հանգահանին , որ թէ՛ եւ առ ժամանակ ստանում է իւր հանգերից առատութեամբ ոսկին եւ արծաթը , բայց պիտի մըտածէ այն օրը , երբ-որ պիտի վերջանայ մետաղը . բայց թարգմանչին կարելի է նմանացնել այնպիսի վաճառականի , որ առուտուր է անում օտար աղքերի հետ , որի վաստակը (դատումը) ո՛չ թէ քամում է իւր աշխարի հարըստութիւնը , այլ ընդ հակառակն՝ օտարինը եւս նորա մ.ջ է ըհըում :

Ուարդմանչի առաջի գործը այն պիտի լինի, որ իրա թարգմանութիւնով կարգացողի վերայ այն ազդեցութիւնը ունենայ, ինչոր նախագաղափարը ունեցել է իրա վերայ: Այդ տեղ թարգմանիչն նման է պարտապահնին, որ եթէ չի կարող պարտքը հատուցանել նոյն իսկ դրամով, որն-որ ստացել է, գոնէ պիտի հատուցանէ նոյն գումարը:

Եթէ թարգմանիչը չի կարող պահպանել այս կամ այն ձեւը՝ թողի իմաստը պարզացանէ. եթէ չի կարող թարգմանել խաղացկոն դարձուածը՝ թող նոյնը մի խելացի կերպով ասէ. թէ չի կարող զօրութիւն տալ (Խօսքն-էլ ունի զօրութիւն) թող տշկը դարձնէ դէպի դաշնակաւորութիւնը. թէ չի կարող կարծառու տաել՝ թող միաքը ճոխ յայտնէ. թէ մի տեղումը թոյլ է թող տրիշ տեղումը ուժեղ լինի. մէկ խօսքով մի տեղի վնասը անպատճառ ուրիշ տեղ պիտի վարձադրէ շահով:

Այս թարգմանելու համար բառական չէ՝ թարգմանիչն հեղինակի հոգւով ոգեւորուել եւ մըսքով երթաւ նորա հայրենիքը, այլ եւ պէտք է մօտենալ նոյն իսկ աղքիւրին, որից հեղինակը ինքը խըմել է, այսինքն՝ բընութիւնը Ուէ ուզում ես, որ թարգմանութիւնը ունենայ նոյն իսկ զօրութիւնը, որն-որ ունի հեղինակը՝ խորը քննէ՝ քու թարգմանելու առարկան. դորա համար պէտք է.... գիտութիւն:

MADONNA¹.

Ինչո՞ւ լալադին աչքով նըխշած է²
Տիրամօր պատկերն ժամումը կախած,
Ինչո՞ւ ձեռները խաչ կապած է,
Աչքերը գեպի երկինք ամբարձած.

Ինչի՞ է կարօտ, ինչ է աղօթում
Անարատ, անմեղ Սուրբ Աստուածածին.

¹ Աստուածածին կամ նորա պատկերը. ² Նկարած, քաշած:

Ասես՝ խօսքերը ջերմեռանդ սրտէն
Գընում են երկինք դէպ առ Սուրբ Որդին:

Կահած¹ չի ինջնում երկնառաք ցողը
Ջամքած, կոշտացած մեր երկրի վերայ,
Կահած չի ծաղկում սեւացած հողը, —
Այս են պաղասում աչքերը նորա:

Ուէ-որ անմերզը չաղօթէր իսկի²
Իրա մեղաւոր ախրօրը խաթրին³,
Երկիր կու ճաքուէր աշեղ ձէներու,
Երկինք կու խոռվէր վերից մեր գլխին:

Ուէ-որ արդարը չի ներէր իրա
Զարչարող, տանջող, զալում⁴ դուշմանին⁵
Եւ ո՞վ էր մեզի վրկում, աղասում, —
Խապառ կրէնիք դբժակսի որդին:

Ապա լոց իլի՛ր, ծանըր ա'խ քաշէ,
Որբոց Վէր, այրեաց մըլսէթարութիւն,
Ուո՞լ քու արտասունքն վաղին ջըրի պէս,
Ուար-որ⁶ ցամաքի երկէս չարութիւն:

— ♦ —

Հարուն-ալ-Ֆաշիթ՝ Դամասկոսի իշխանը ծնաւ 765ին Յիսուսի
Քրիստոսի ծնունդից յետ Դորա իշխանութիւնը իւր նախորդ եւ

¹ 'ի դուր, լնդունայն: ² ամենեւին, երբէք, ոչ մի ժամանակ:
³ 'ի սէր, 'ի հաճոյս, վասն: ⁴ չար, անողորմ: ⁵ թըշնամի, ատեցող:
⁶ միայն թէ:

աջորդ թագաւորաց մէջ ամենից փառաւոր եւ երեւելին էր։ Դա մեծամեծ յաղթութիւններ արաւ Յունաց վերայ՝ Խրինէի եւ Կիկիփորի տիրապետութեանց ժամանակ։ Իսյց պէտք չէ կարծել, որ միայն պատերազմական սխրագործութիւններն ¹ են, որ անմահացրին այս երեւելի անձին յիշատակը. ո՛չ դա շատ ձեռնտու եւ քաջալեր եղաւ գեղարուեստին ² եւ Արաբացւոց գրականութեան ծաղկմանը, որ ինքը եւս մշակել է տէրութեան գործերից ազատ ժամանակը։ Հարուն-ալ-Շահը ժամանակակից էր Մխճին Կարոլոսի՝ Գաղղիոյ կայսեր, որի յարգը ձանացեց եւ պատուեց, եւ որի հետ միշտ գրութիւն ունէր։ 807ին մեծամեծ սկարգեւններով ուղարկեց նորա մօտ իւր գեսպաններին. այդ պարգեւնների մէջ կար մի ջրային ժամացոյց, որ այն ժամանակուայ մարդոց հրաշք էր երեւում, եւս եւ մի ձատրակ ³, որի կտորները մինչեւ այս օր պահպանուած են Փարիզի աղգային գրատան մէջ։ Այս հըռչակաւոր մարդու փառքը յաւիտեան անազու պիտի մնար, եթէ նա լոկասկածանքով պաշարուած՝ չի թափէր Բարմէսիդներու անմեղ արիւնը։ Կարծիք կայ, որ գորա թագաւորութեան ժամանակ գրած լինին այն զուարձալի առասպելները, որ մեղ յայտնի են « Հաղար եւ մի Գիշեր ⁴ » ահունով։ Հարուն-ալ-Շահի վրայ շատ մանրավէաններ ⁵ պատմում են արեւելեան ժողովուրեքը, որ մասսամբ աւանդութիւնով եւ մասսամբ գրած հասել են մինչեւ մեր ժամանակ։

Մի օր Հարուն-ալ-Շահը որս անելու ժամանակ՝ ձանապարը կորցուց եւ մոլորուեցաւ մի անծանօթ դաշտի մէջ։ Խրկայն միջոց ունայն պրտրտելով ու հարցուվորձ անելով՝ հեռուից մի ծերունի տեսաւ, որ ինչպէս երեւում էր, երկիր հերկելով էր վրազած։ Հարուն-ալ-Շահը եւ նորա ընկերակիցքը դարձրին ձիերը դէպի այն կողմը։

Օերունի հողագործի երեսաց տիպարը խիստ յարգելի էր. նորուալեւոր մազերը, մօրուսը եւ ունիքերը յասնի ցոյց էին տալին թէ երկարատեւ կեանք անցուցած պիտի լինի նա։ Խմացան որ՝ աշխատաէր ծերունին ընկուղ է ցանում։ Հարուն կանգնեցուց ձիին ու երկար ժա-

մանակ ու շաղրութեամբ եւ զարմանալով նայեց նորա աշխատանքին, եւ այն հոգացողութեանը, որ ծերունին տալիս էր իր վարուցանքսին։ „ Պարերկամ, ասաց Հարուն-ալ-Շահիդը, քսնի տարի անցրել ես աշխարիս երեսին։ ”— Չորս տարի, պատախանեց ծերունին անխռով։ Ուագաւորի դրանիկներից ¹ մինը բարկութեամբ ասաց՝ „ Այ Լիբը, միթէ չ'գիտե՞ս որ քեզ հետ խօսողը քու միջափառ աբքան է. որ նա կարող է քեզ այդ ստախոսութեանը համար չարաչար պատուհանէլ։ ”

Օերը պարկեշտութեամբ ասաց— Ասածըս սուս չէ, այլ ակներեւ շշմարտութիւն։ Այս լու՛ իմ ապացոյցները Ովկ կարող է անուանել « կ եանք » այն ժամանակը, որ մարդըս, անցնում է որպէս եւ իցէ բըռնաւորի կառավարութեան ներքոյ, երբ-որ տեն մի հօպատակի մէկ ոտքը կանգնած է թշուառ կեսմիքումը, եւ միւսը անդադար սայթաքում է աղետալի մահուան դուռը։ Միթէ շուտով պիտի մոռանանք Տաճկաց տիրապետութիւնը մեր երկրի եւ ժողովրդոց վրայ, այն գըժնդակ պատերազմները, որ մենք նոցա հետ ունեցանք. երբ-որ ոչ մինը մեղանից ժամ մի չէր կարողանում աղատ շունչ առնել. երբ-որ խաղաղանէր ժողովրդոց արիւնը հեղեղի նըման վազում էր գետնին, եւ վերջապէս երբ-որ աղետք, սարսափ եւ տափնակ մահու տիրել էր ամենուստեք փոխանակ խաղաղ եւ բարեբաստիկ օրերու։ Միթէ այդ կեանք կարելի է կոչել։ Ուրեմն ես հաստատ կարող եմ ասել, որ միայն չորս տարի եմ ապրել աշխարիս երեսին. երկու տարի քու լուսահոգի հօրը ժամանակ, եւ այլ երկու տարի քու կառավարութեան օրերը, ո՛վ իմ մեծանուն եւ իմաստուն տէր եւ իշխան, որի կեանքը, տացէ՛ Աստուած, լինի երկայն եւ բարեբաստիկ, եւ անունը անմոռաց մնայ ամեն երախտագէտ հպատակացըդ սրտերու մէջ։ ”

Այս պատախանը շատ դուր-եկաւ Հարուն-ալ-Շահիդին, որ իսկայն հրամայեց գանձապետին, որ այդ խելոք խօսքերու համար՝ Հաղար սակի տայ ծերունիին։ „ Պայց ասա, ” խընդիրեմ, աւելցուց Հարուն-ալ-Շահիդը, ինչո՞ւ համար աշխատում ես ծերութեանըդ օրերը՝ հերկելով այդ դաշտը եւ նորա մէջ ընկոյզ ցանելով. միթէ յոյս ունիս, „ որ նոքա կըծլին, կըծաղկին եւ մեծ մեծ ծառեր կըդառնան. կասկածելի է, որ զու մի օր կարողանաս այդ քրտնաջան աշխատանացըդ վարձը ստանալ։ ”

¹ подвигъ. ² художество. ³ шахматы. ⁴ тысяча одна ночь. ⁵ анекдоты.

¹ придворный.

— Ա վ մեծիմաստ իշխան, ասաց ծերունին, սրտից ծանր ախճաշելով.
այն ծառերը, որոնց պտուղը ես վայելել եմ՝ մինչեւ այսօր՝ նոքա են ցա-
ռել, որոնք ինձանից շատ առաջ են կեցել. ուրեմն՝ ես-էլ ինձ համար
սպառականութիւն պիտի համարեմ ցանել այն ծառերը, որոնց պտուղը
իմ յետնորդք պիտի վայելեն : —

Այս սպառասխանը առաւել դուք-եկաւ թագաւորին քան թէ
առաջինը, որ եւ իսկըն հրամայեց կրկին անգամ նորան հաղար
ուկի տալ:

Յետոյ ծերունին աւելացուց այս խօսքերը. — Ուագառոր՝ ապրած
կենաս, ընկուղի ծառը ցանելից յիտ սովորաբար քան տարիից է պտուղ
տալի իր ցանողին, եւ այդ այն ժամանակ՝ եթէ եւ եղանակը, եւ արե-
գակը բարեյաջող լինին նորա աճանանը. բայց իմ այսօրուայ ցանածը
քու ողորմած արեգակի բարերար նըշոյներովը յաջողած՝ այսօր եւ
եթ ինձ բերեց այնպիսի առատ պտուղներ, որ այլ դիպուածումը եր-
բեք չէր կարող բերելու, թէ՛ եւ շատ դարեր տեւեր նորա քաղոցը : —

Այս լսելով երրորդ անգամ հրամայեց արուն-ալ-Շահելը ծե-
րունին հաղար ուկի տալ ու ասաց դրանիկներուն՝ „Դէ՛Տ, շուտով
հեռանանք այս խելոք ծերունից, թէ չէ սորա լսելով՝ իմ բոլոր տէրու-
թեան գանձը կըսպառեմ կարճ միջոցումը :”

Տ Ս Գ Ե Ն Բ ՈՒ Թ Գ

(Պարերգութիւն)

„Ա սպեա՝ միոյն քրոջ մնքուր սեր
„Քեզ եմ նուիրում,
„Ա ի՛ պահանջիլ դու ուրիշ սեր,
„Քեղնից եմ խընդրում:

„Հանգիստ կարող իմ երեւել,
„Հանգիստ քեզ տեսնել,
„Բայց քու աչքի արտասունքը
„Չեմ կարող տանել:

Տըլսուր կանգնած, գըլսուխը կախ
Լըսում է խօսքին,
Ու գըրկելով վերջի անգամ
Աեղմում է կուքքին :

Յետոյ հեծնում է երիվար,
Օօք է ժողովում.
Սուրբ-Կրկիրը ավատելու
Ճամբայ է ընկնում:

Կատ սիրալի գործ է գործում
Հըսկայից գունդը,
Կատ նեղութիւն է ըստանում
Ժըշնամեաց խումբը:

Տոգէնրուրգի քաջ բազուկը
ԱՀ է այլազգուն,
Բայց իւր սիրտը անբաղդ սէրից
Զի առողջանում:

Մի ամ զսպեց իր կարօտը,—
Աւել չի կարաց.
Մի օր զօքը իսպառ թողեց,
Ու անյոս մընաց:

Տեսաւ մի նաւ ծովի ափին
Առագաստը բաց,
Ալտաւ մջը, ու Սուրբ-Կրկիրին
Անաս-բարեւ ասաց :

Խր նաղելոյ նա ամրոցի

Դուռն է պինդ զարնում,

Զարագուշակ այս խօսքերով

Այն բաց են անում:

,,Քու պըտրածը քօղ է չափնում,

,,Երկնից հարս եղաւ,

,,Երեկ կատարուեց օծումը,

,,Երբ նա վանդ մըտաւ:

Ապա թողեց իւր ամրոցը,

Թողեց եւ ասպար,

Օէնք ու զրահ էլ չի տեսաւ

Եւ ոչ երիւար:

Տոգէնքուրգը իւր սիրական

Եւ աշխարք թողեց,

Եւ իւր ազնիւ մարմնոյ վերան

Ապէ շոր ձրդեց.

Հինեց նա մի փոքրիկ խըրճիթ

Անտառին մօտիկ;

Ուստի վանքըն իւր սիրեկնի

Անում էր մըտիկ:

Վեր էր նայում դէպի վանքը,

Ժամերով նայում՝

Մինչ սիրելոյ պատուհանը

Կամաց էր բացվում:

Երբ սիրոնը երեւում էր

Խւր պատուհանից

Եւ դէպի ձոր վայր նայում էր

Խաղաղ ու հանգիստ.

Այն ժամանակ մըսիթարած

Դորնում էր յոյսը,

Հանգիստ պատում էր, որ ծագի

Արեւի լոյսը.

Այսպէս նըստում էր նա այնտեղ

Հատ ու շատ տարի,

Մինչ սիրեկնի պատուհանը

Կամաց կըբացուի:

Այսպէս նըստած էր նա մի օր

Անշոնչ, չոցացած,

Դէպ սիրեկնի պատուհանը

Երեսը ուղղած:

ՀԱՅՈՑ ՊԱՏՍՄՈՒԹՈՒՄՆԵՐ.

1. Հ Ա 8 Կ.

Երբ-որ համատարած թքհեղեղը բնաջինջ արաւ ապականեալ աղքը մարդկութեան, որով Աստուծոյ սուրբ կամքն էր նորոգած աշխարը բնակացնել նոր եւ անբիծ մարդիկներով՝ երկրիս վրայ (ինչպէս պատմում է հին աւանդութիւնը) բաց ՚ի ՚Երից՝ իւր որդիներով եւ հարսերով, եւ Տապանի մշջ ազատուած կենդանիներից ուրիշ շնչաւոր էակ չէր մնացել: Թքհեղեղի մասին վանագան են կարծիքները իմաստուն բնագէտներուն եւ աստուծաբարաններուն: առաջինք (այսինքն բնագէտները) առգրում են այդ համատարած, աղետալի յեղափոխութիւնը բնական եւ կարեւոր պատճառներու: իսկ երկրորդք (այսինքն՝ աստուծաբանները) դորա ներհակ՝ հաստատում են թէ՝ թքհեղեղի միակ եւ իսկական պատճառը այն ժամանակուայ մարդոց բարուց ապականութիւնն

Էր. ինչ կ'ուզէ լինի՝ ջքհեղեղը անպատճառ պիտի պատահէր,—որ եւ պատահեցաւ իսկ. երկիրը մաքրուցաւ ամեն կեզ մոլութիւններից, եւ մարդը այնուհետեւ առաջին ուներ սպառնալիք՝ ի կողմանէ իւր Ատեղծողին, որ միշտ կարող էր նորոգել եթէ ոչ նոյն պատուհասը, գոնէ ո՛չ պակաս քանթէ արդ ընդհանուր աղջետը, եթէ նա նորից ուզէր պալականել իւր բարբը ու վարքը: Կոյ նահապետը ցած-եկաւ Տապանից, որ Հայաստանի Արարատ սարի վերայ ինջել էր, եւ իւր որդիներով եւ հարսերով բնակեցաւ նորա ստորոտը: Քանի-որ կենդանի էր այդ մեծայարդոյ ծերունին եւ նահապետը նորա սերունդը նորա օրինակին հետեւելով՝ պաշտում էին ճշմարիտ Աստուած, եւ կատարում էին իրանց որդիական եւ հայրական սպառաւորութիւնը ջերմեռանդ սիրտով: Բայց երբ-որ Կոյ նահապետը մեռաւ, ջքհեղեղի սարսափելի յիշառակը անհետացաւ մարդոց մըտքից, եւ երբ-որ մոլութիւնը աւելի բերկրալի հրձուանք էր խոստանում նոցա այս կերպումը, քանթէ առութինութիւնը՝ այն ժամանակ մարդը նորից ընկաւ առաջուայ անառակութեան մէջ: Որքան տարբեր էր մարդոց մոլութեան ձեւը, այնքան-էլ տարբեր էին Աստուծոյ պատիմները: Կարդա՛ Աստուածաշունչ գիրքը, ամեն էջը նորա կրթանայ քու աչքի առաջ Աստուծոյ գութը եւ հայրական խրատը: Մենք այստեղ կ'յիշենք նոցանից մինը, որ մանաւանդ մեր ազգի համար մեծ նըշանակութիւն ունեցաւ, եւ որ — հաստատ կարելի է ասել — Հայոց ազգայնութեանը տուեց ծնունդ եւ զարգացումն:

Երբ-որ մարդկան ազգը քանի գնաց բազմացաւ այն փոքրիկ տեղումը՝ որ Կոյ նահապետը ջքհեղեղից յետ ընտրել էր իրա եւ իւր որդոց համար երկրորդ հայրենիք՝ Հայաստանը՝ չ'էր կարողանում տեղաւորել այդ աշագին բազմութիւնը մարդկան, որոնք բաց'ի սեպհական ընտանիքից՝ պէսոք է ունենային նաեւ լայնատարած դաշտեր իրանց բազմաթիւ հօտերը եւ խաշենքը արածացնելու համար. կարօտութիւնից բոնադատուած թողին լեռնուտ Հայաստանի նեղ հովիսները, եւ ձորերը, եւ գնացին բնակեցան մերձակայ անքնակ տեղերը: Միջագետք, այսինքն՝ Եփրատէս եւ Տիգրիս գետերու ընդարձակ դաշտավայրը, ընտրեցին իրանց համար բնակելու եւ անասնոց համար արածելու յարմար տեղ: Ընեցին Բարելնի աշտարակը, որ Պոլսիսի ասածով (որ իւր ժողովրդի գաղափարի յարմար է գրում) ուրիշ բան չ'էր, բայց եթէ ապաստանարան, ուր-որ նորա պիտի աղատուէին, եթէ կրկին անդամ ուզէր Աստուած ջքհեղով պատժել նոցա. բայց որ աւել ճշմար-

տանման է թուում շատերուն՝ այս պիտի լինի նոցա իսկական շարժառիթը, Որ այն աշտարակը հեռուից եւս տեմնուի, որ մարդիկ որչափ եւ հեռանան՝ իրար չի կորցնեն, մէկզմէկից չ'օտարանան: Այս աշտառակը կամեցան ցամաքային «փարոս» շնորհի լինէլ, ինչպէս-որ յետոյ ծովալունիները շնուեցան ծովերու վերայ: Կոյա մէջից հանձարեղները գիւտէին, որ մարդիկ միշտ չ'են կարող խաղաղութեան մէջ ապրել, որ կը սկըսեն մէկզմէկու կոսորել, այն եւս դիտէին, որ դեռ եւս մարդ մարդու թշնամութիւն չ'արած պիտի գալանները անեն. էնտուր համար այս աշտարակը շնեցին, որ եթէ մարդիկ կամ իրանց նմաններէն, կամ գաղաններէն երկիւղ ունենան՝ սյն աշտարակին դիմեն, եւ նորա, մէջ պատսպարուին եւ աղատուին:»

Բայց այս ամբարտաւան խորհուրդը միանգամայն ընդդէմ էր Աստուծոյ սուրբ կամացը, որ ուզում էր, որ մարդիկ ցրուին երկրիս երեսին եւ լցնեն ամեն անքնակ եւ ամսոյի տեղերը, որոնք անգործ թոշած գաղանաց բնակարան էին դարձել, այնինչ մարդի ձեռքի տակ կարող էին պըտղաբեր եւ արգաւանդ դաշտերով եւ պարտէցներով լցուել: Ուստի, ինչպէս Աստուածաշունչ գիրքը պատմում է, Աստուած խառնեց մարդոց լցուները սյնակս, որ նոքա չ'էին կարողանում միմեանց ասածը հասկանալ եւ մէզմէկու օգնել. գորանից հետեւեցաւ այն, որ նոքա թողին աշտարակը կիսաշէն, եւ ցրիւ-ընկան՝ որը այս կողմ եւ որը այն կողմ: Ըփոթած այդ բազմութիւնը չ'ունէր մի գլխաւոր կամ իշխան, որ կարողանար ամենին մի կանոնի տակ պահելով հեռացնել նոցա մէջից տարածայնութիւնը, վէճը, կրիւները եւ արիւնաշեղ կոտորածները, որոնք աներկրաց հետեւանք են անիշխանութեան. բնականապէս կարծելի է որ՝ կամ ժողովուրդը պիտի ընտրէր իրա համար մի տէր, դատաւոր եւ պաշտպան, կամ թէ նոցա մէջից պիտի դուրս-գար մի խելոքը, որ հասկանալով իր նմաններու կարիքը յանձն-առնէր այդ դժուար, բայց անձասիրական պարտաւորութիւնը ու պատիւը: Աստուածաշունչը ասում է որ վերջինը պատահեցաւ, որ միանգամայն համաձայն է մեր ազգային տարեգիւններու կարծեացը հետո: Ըստանուեցաւ մի հանձարեղ մարդ՝ Երբովդ կամ Բէլ սնունով. նա ժողովեց իր չորս կողմը քաջ տղամարդիկի, զինաւորեց նոցա տէգերով ու նետուաղեղով: Առաջի նուագ գործածեց նոցա կատաղի կենդանեաց դէմ ուս անելու. բայց մըտքումը միանգամայն ուրիշ խորհուրդներ ունէր, այսինքն՝ նա սյդ պատրուակաւ միայն իւր մօդովում էր մատաղահաս եւ քաջառոյդ երիտասարդներ, որոնք միշտ սպառազնուած լինելով որսի՝ ընտելանում,

էին խիստ եւ աշխատասէր կենաց եւ հնագանդութեան իրանց իշխաններուն, որոնք առաջնորդում էին նոցա արշաւանաց եւ որսի ժամանակ։ Վերջապէս՝ այս երիտասարդները տեսնելով՝ Վերբովդի քաջութիւնը եւ ճարտարութիւնը՝ միաբերան խընդրեցին նորա թագաւորելու իրանց վերայ, որ փառասէր եւ խորամանկ՝ Վերբովդը ուրախութեամբ յանձն առաւ։

Բայց այդ ժաման ուրիշ էր կարծիքը հանձարեղ, խորագէտ եւ քաջ չայկին. ուրիշներու նըման նա չուզեց ծառայաբար խոնարհել գլուխը այն մարդու առաջ, որ իւր փառամոլութեամբ լցուած՝ մըտին ունէր խել իւր նըմաններից այն աստուածատուր սպարգելը, որի կորուստը անհնարին է շուտով եւ դիւրութեամբ յետ-գարձնել—ազատութիւնը ուղղում եմ ասել։ Հատ յորդորելով, շատ ապացոյցներ բերելով, թէ ինչպէս պիտի ափսոսան մէկ օր մարդիկ այդ կորուստի համար, վերջապէս տեսաւ, որ հընար չի կայ նոցա խելքի բերելու՝ ազնիւ հըպարտութեամբ թողեց պըտղաւէտի դաշտերը, իւր կալուածքը, իւր հըպատակները ու ստրուկները՝ ու իւր մի քանի ազգականներու հետ գաղթեցաւ չայստանի լեռնադաշտերու մէջ, ուր մնացել էին շատ գերդաստուններ, որոնք անխառն էին աշխարհականութեանը։ Խմնատուն կառավարութեամբ եւ ամոք խօսքերով տիրապեսեց նոցա վերայ, եւ հաստատեց իւր բնակութիւնը. այն գեղը, ուր-որ ինքը կենում էր՝ իւր անուամբ չայկաշէն անուանեց, եւ այն տեղերը, որոնք նորա բնակութեանը չորս-կողմն էին՝ չարք ասաց։

Բայց Վերբովդին դուր-չեկաւ չայկի արարմոնքը, որք միանգամայն ներհակ էին նորա փառասիրական մըտքերուն. նախանձով վառուեցաւ նորա սիրտը, երբ-որ նա իմացաւ, որ ինքը մենակ չէ՝ աշխարհստէրը, այլ կայ մի ուրիշ մարդ, որ եւ ուժով, եւ խելքով, եւ իմաստուն կառավարութիւնով ամեններին պակաս չէ՝ նորանից, որի անունը եւ սիրագործութիւնները միաձեւ յիշվում եւ կրկնում են ամենի բերանումը։ Վախանձը առաւել եւ առաւել կրծում էր նորա սիրտը. բայց նա վախենում էր արձակ եւ առանց մի պատճառի կոիւ բանալ նորա հետ, ուղիղ մըտածելով որ՝ յուսահատեալ թւշնամին միշտ ժանեկ է ծախում իւր անկումը եւ մահը, եւ այդ մանաւանդ այնպիսի վեհանձն մարդիկ, որպիսի ոք էր չայկ եւ նորա ընդունիք։ Ակսեց մեղմ խօսքերով եւ մեծամեծ յոյսերով խաբել նորան, այնպէս զի չայկ թողած տուրով եւ մեղը, իւր հըպատակները՝ գայ եւ բնակի նորա երկիքը եւ հընազանը, դի նորա հրամանին։ Այս ասպարանքը տուել էր իւր որդուն, որ նա գնայ

եւ չայկին հարելոն հրաւիրէ, ուր այն ժամանակները՝ Վերբովդ հաստատել էր իւր թագաւորութիւնը։ Դեսպանները չայկի առաջ կը կնելով՝ Վերբովդի խօսքերը՝ ասացին. „Պնացել բնակել ես ցուրտ ու սառած, երկիրներումը։ Ուս' զ ցուրտ հըպարտութիւնը ու բնակէ՛ իմ երկիրներու մէջ, ուր-որ ուղես։“ չայկ խիստ պատասխան տուեց դեսպաններուն ու յետ ուղարկեց, ու նախազգալով այն չարք հետեւանքը, այն կոտորածները, որոնք անշուշտ պիտի հայսցնէր կտորազած՝ Վերբովդ իւր հպատակներուն՝ իսկոյն պատրաստուեցաւ վճռական պատերազմի։ Աէլ սաստիկ բարկացած՝ իսկոյն զօրքը ժողովեց, ու շտապեց չայկի վերայ անակնկալ յարձակուել։ Բայց, ինչպէս վերը ասացինք, չայկ պէտք եղած պատրաստութիւնը առաջուանից տեսել էր. եւս եւ նորա կաղմոս թոռը փոքր ինչ ժամանակ առաջ իմաց էր արել նորան որ՝ „Ահա՛ գալիս է Աէլը քու վերայ մէծ զօրութիւնով. ես իմանալով նորա մօտենալը՝ հաւաքեցի բոլոր կայանքը ու ընդունները, եւ գալիս եմ քու մօտ։“

Չայկի յետագայ գործը մեղ ցոյց է տալի, որ նա ոչ թէ միայն քաջ եւ ուժեղ է եղել, այլ եւ ունեցել է այն ամեն արժանաւորութիւնները, որոնք զարդարում են իշխանին ու կառավարողին. իսկապէս եղել է նա խորին գաղղաքագէտ, հընուտ զօրապետ եւ գըմառատ հայր իւր հպատակներուն։ Վրբ-որ չայկ իմացաւ, որ Աէլը մէծ զօրութիւնով գալիս է նորա վերայ, որ մի հարուածով ցրուէ, ոտնակոխ անէ նորա զօրքը, եւ իրան սպանէ արխւնահեղ պատերազմի մէջ, կամ՝ շզթայած ձեռն ու ոտները գերութիւն տանէ ամենեւին չի սարասիեցաւ, ինչպէս փոքրոդի ու երկշուս մարդ, այլ ժողովեց իւր սակաւաթիւ զօրքը ու շտապեց նորա առաջ։ Չայկ չուզաց իր աշխարը պատերազմի դաշտ գարձնել՝ ինայելով շատ անմեղ գերդաստունների խաղաղ կեամքը եւ աշխատակը հողագործների քրտնաջան վաստակը, որոնք այդպիսի դիակուածներուն կը կնապատկում են ընդհանուր աղէտաքը, այլ գընաց Վան լշակի մօտ եւ այնտեղ սպասեց Աէլին։ Դեռ եւս պատերազմը չի սկսած չայկը մի քանի իմաստուն խրատներ տուեց իւր զօրքին, որոնց Ճիշդ կատարելից կախած էր գործի յաջողակ վերջանալը յօդուտ չայկին. „Ինչ պէտք կըսկի պատերազմը, ասաց նա, բոլոր զօրութիւնով պիտի մաղենք դէպի այն կողմը, ուր-որ կեցած կը լինի Աէլ բըռնաւորը, եւ պիտի աշխատենք միայն այն կողմն չարաչար հարուածներ տալ։“

Այս որ ասաց՝ իսկոյն հրամայեց զօրքին բարձրանալ մի բլուրի վերայ եւ այն տեղ սպասել թւշնամեաց յարձակմանը։ Ուղշնամին չու-

շացաւ երեւելու. Հայերը հեռուից տեսան ինչպէս նոքա ԲԵԼի առաջնորդութեամբ առաջ էին գալի՝ ամենիքը ոտից գլուխ զրահաւորած եւ սպառացինած. Գուցէ Հայկի զօրքը տեսնելով այդ աչեղ եւ բազմամբութշնամիներուն՝ սարսած եւս լինէին. բայց ինքը Հայկի վստահացած իւր պատերազմական հանհարին՝ ամենեւին չել վհատեցաւ. իւր սակաւաթիւ զօրքը գունդ գունդ բաժանեց եւ եռանկիւնի ձեւ տալով նոցանշան տուեց, որ շուտ շուտ առաջ-խաղան նոցա: ԲԵԼ առաջուանից վրստահ գոլով, որ Հայկի զօրքը նաեւ չել համարձակիլ փոքր ինչ դիմադարձութիւն ցոյց-տալ, այլ ընդհակառակն՝ թշնամիներուն տեսնելուն պէս՝ մի կողմ կը ձբդէ թուրը, նետը ու վահանը, կամ՝ փոքրոգութեամբ կը փախախչի, կամ՝ գըլուխը ծոած՝ կը հազարանդուի նորան: Այդ պատճառաւ միանդամայն աւելորդ համարեց բոլոր զօրքով յարձակուել Հայկի վերայ. այլ մեծ մասը թողեց լերան վերայ ու առաջնորդելով փոքրիկ, բայց ընտիր գումարտակին՝ առաջ-եկաւ. Հայկ իսկոյն տուեց պատերազմի նըշանը. թշնամիք խառնուեցան, դաշտը թընդաց մարտիկներու ոտնաձայնէն եւ զինքերու հարուածներէն:

ԲԵԼը եւ նորա զօրքը ամենեւին մօքերից չէին անցրել, որ պիտի պատերազմին, ուստի Հայկի յարձակումը նոցա համար անակընկալ էր. չել կարողոցան տեղերումը պինդ եւ հաստատ մնալ. առաջ ու առաջ փոքր ինչ կուտեցան, բայց յետոյ զարհուրած թողին բոլոր զէնքերը եւ ապաւինեցան իրանց ոտերու շուտութեանը: Բայց Հայկի եւ նորա զօրաց նետերը միշտ ու միշտ համսում էին նոցա մէջքին եւ վդին: Այս թեթև յաջողութիւնը չել բաւականացուց իմաստուն եւ հեռատես Հայկին. նա կարծում էր, որ կատաղած ԲԵԼը կարող է համել իւր մեծ բանակին, որ լերան վերայ սպասում էր նորա հրամանին, եւ հրաման տալ իւր զօրացը յարձակուել թշնամեաց վերայ. ժամանակ չել կորցրած հանեց կապարձից նետը, լարեց իւր լայնալիք աղեղը, եւ այնպիսի ուժգնութեամբ եւ ճշգութեամբ արձակեց, որ տեղն ՚ի տեղ անշնալացուց ու գետնին գլորեց ամբարտաւան ԲԵԼին: Կորա զօրքը տեսնելով իւր իշխանի մահը՝ սարսափեցաւ, ցիր ու ցան եղաւ ու փախաւ. ԲԵԼի հարուստ բանակը՝ մէջի բոլոր զինքերով, պատերազմական պաշարներով եւ կարսսիքով ընկաւ Հայկի ձեռքը:

Այս երեւելի յաղթութեանը՝ պատերազմի դաշտի տեղը Հայկի հիմնեց քաղաք եւ անունը դրեց «Հայկ», եւ գաւառի անունը ասուեցաւ «Հայոց Չոր». ԲԵԼի մեռած տեղը առվում է «Պնիքըմանք»: Ահա՝ այդ հոչակառոր մարդու անուամբ մեր աղբը կոչվում է «Հայ»,

եւ մեր հայրենիքը՝ «Հայաստան», այսինքն՝ Հայերու աշխարը կամ բնիկ երկիրը: Ուրեմն՝ Հայկն էր, որ տուեց մեր աղզին անուն եւ տէրութիւն: Երկար ժամանակ կառավարեց Հայկ իւր համարձակներու վրայ, շատ բարեկարգութիւններ արաւ իւր աղզի համար եւ խորին ծերութեան հասած մեռաւ, ու իւր աթոռը թողեց Արմենակ որդուն: Հայոց տէրութեան ծագումը 2350 տարի Քրիստոսի օք. առաջ պատահեցաւ:

Ուսանող:

(Երդ):

Ուսանող ասածը մի երջանիկ մարդ է,

Օի նա միայն լաւ ապրել գիտէ.

Չեշը գինով առատ,

Քըսակը փողից փարատ

Այսպէս ապրել միթէ լաւ բան չէ.

Փողից գարտակ ինքը, պարտքը մինչի շւինքը,

Այս է գոված ու աղնիւ կեանքը:

Ուսանողի սիրող սիրոյ-էլ է տրւած,

Ինչպէս հրամայել է մեղ Աստուած.

Սիրուն աղջիկ տեսնել

Ու քամակից չընկնել —

Այս օրէնքով խիստ է արգելած:

Գըրել կարդալումը ովք է մեղնից առաջ,

Դայ, մի կանգնի, տեսնենք, մեր առաջ,

Մի քանիսն են ասում՝ „Դու խաղումն ու քէֆում

Ինչ շահաւէտ բաներ ես տեսնում:



Այդպէս ասողները
Են լոկ տխմաբները,
Որք փողին են Աստուծոյ տեղ պաշտում.
Օր մի քէֆովացած, օր մի խմաստասէր, —
Այս Վալսէսն-էլ բնաւ արգելած չ'էր :

Հօրը խիստ նամակը ինձ միշտ տխրացնում է,
,Ինչե՞ր սովորել ես՝ հարցնում է.
Կա եւ ուրիշ սրանից՝
Խկոյն յետ Անձ-Պասից
Անդ դատաստան աչեղ սպասում է.
Բայց մի՛ վախիք, եղբարք, Աստուծ մեղ օգնական,
Վմենքը-էլ կ'իլենք բաւական :

Աշխարհաբառ Եղու :

Կորերումը դուրս-եկաւ Վոսկովումը «Յիշատակարան Լազար-եանց Տոհմի» անուանած գիրքը, որ լոյս-ընծայել է Լազարեանց աղ-դալցու ճեմարանի կրօնի դասատուն (Վսեր Վագիստրոսը): Յիրաւի որ այս գիրքը մեծ ուրախութիւն պիտի պատճառէ ամեն մի բարեմիտ չ'այի, մանաւանդ նոցա, որոնք կենում են Որութեան մէջ. պատճառ որ՝ հաղիւ թէ կ'գտնուի որպէս եւ իցէ հայաբնակ քաղաքներումը այն-պիսի տուն, ուր-որ մըտած չ'լինի այս բարերար Տոհմի առաքենագործ նշոյլը: Բայց այս անգամին ո՛չ գրքի ներքին պարունակութիւնը տուեց մեղ շարժառիթ խօսել (որ մենք պարու անձին համարում եմք ուրիշ ան-դամ աւել մանրամասն ճառելու նորա վերայ) այլ նոյն հեղինակի խօս-քերը, որով վերջանում է յառաջաբանութիւնը:

,,Խ մատենագրութեանս յայսմիկ, ասում է գիտնական Վսեր Վա-
,գիստրոսը, զգրոյն, այն է, զինն, զկանոնաւորն եւ զհարազատն

,,մեր 'ի կիր առի բարբառ, եւ ոչ վնորմ չմշակեալ, իմա՛ զռամլացն
,,զկողմանց կողմանց զաշ խարհիկին անուանեալ, աղխազուր լեզու, զի
,,որքան համեղական եւ ազդոյ եւ գեղեցիկ է առաջինն, այնչափ
,,է վերջինն, թոյլ, տգեղ, անհեթեթ եւ զուրկ միանդամացն 'ի կարի
,,կարեւորացն կանոնաց ուղախօսութեան, որպէս եւ շատք իսկ ոչ յան-
,,նշանից արանց՝ որ քաջահմուտ լեզուիս ճանաչին, վկայեն անաշառա-
,,պէս :“

Այսպիսի սաստկութիւնը, այսպիսի խրստութիւնը ընդդէմ աշ-
խարհիկ լեզուին, (թող ներէ՛ մեղյարգելի հեղինակը) որքան աւելորդ,
այնքան եւս զարմանալի երեւեցաւ մեղ: Աւելորդ այնու համար, որ
մինչեւ ցայժմ, թուփ մեղ, չի եղել այդ սովորութիւնը, ո՛չ հին եւ
ո՛չ նոր հեղինակաց մէջ, որ խրեանց գրքի յառաջաբանութեան մէջը
յիշեն՝ թէ ինչո՞ւ համար են գրոց լեզուաւ յօրինել եւ ո՛չ համարակ
խօսակցութեան բարբառով. իսկ եթէ ընդհակառակն, աշխարհիկ լե-
զուաւ գրողք, որպէս տեսանում եմք, սորա համար խօսում են, պատ-
ճառը այն է, որ սոքա հին սովորութեանը չ'ետեւելով՝ պարտաւոր են
համարում յայտնել խրեանց նրանակը, որ իբր նոր իմն հնագի է լու-
սաւորութիւնը աղգի մէջը տարածելոց համար: Արդարը են մի սոքա կամ
մեղապարտ՝ հետեւեալ տողերումը վորքը 'ի շատէ կ'տեսանեմք, եւ յար-
գելի հեղինակը գուցէ կ'տեղեկանայ՝ թէ ինչո՞ւ համար զարմանալի եւս
համարեցինք նորա վերոյիշեալ խօսքը:

Յարգելի հեղինակին չե՛ անյայտ թէ՝ 'ի Որուստատան, 'ի Տաճ-
կաստան եւ այլ տեղիք, ուր եւ ժողոված են հայաղգի բընակիչք, շատ
գիրքեր են յայտնուած աշխարհիկ լեզուաւ. ուրիմն նոցա յօրինողքը,
որոց մէջ կամ բաւական երեւելի անձինք, չկարացին հասկանալ խր-
եանց աշխատանաց զուր եւ անարժան լինելը, եւ կամ գրոց լեզուի թրշ-
նամիք էնն. յուսամ՝ թէ չե՛ք ասիլ՝ այո՛: Գուցէ թէ աշխարհիկ լեզուի
գործածութիւնը աղգի հարկաւորութիւն համարեցին, կամ նորա պահան-
ջողութեան իրաւոնքը ճանաւըցին:

«Չէ՛ մշակեալ», ասում է յարգելի հեղինակը, «այդ լեզուն եւ ան-
համ է»: Ճշմարիտ է բայց եթէ այդ չմշակեալ լեզուն բոլոր աղգը իւր
բերանումը ունի եւ վորքը 'ի շատէ հասկանում է միայն այդ լեզուաւ
գրած գրքերը՝ համը է արգեօք այդ լեզուաւ նորա հետ խօսել եւ նորա
համար գրել, թէ այն հին եւ մըշակեալ լեզուաւ, որոյ համար նա
ասում է՝ „Կարելի է լաւ է, բայց ես չեմ հասկանում:” Այներեւ չէ

արդիօք եւս, թէ աղգը բան հասկանալով պիտի լուսաւորուի. գուցէ նորա լուսաւորութեան մէջը հետ զհետէ մտնի իւր հին լեզուի գոնէ մասնաւոր տեղեկութիւնը եւս : Աթէ անհամ է այդ լեզուն, ինչո՞ւ ուրեմն խօսում է ինքը յարգելի հեղինակը, որ շատ լաւ գիտէ գրոց համեղական լեզուն, կարելի է ասէ նաև Այսու համար, որ աղգը չի հասկանալ իմ գրոց բարբառը»: Աթէ այդպէս է, ուրեմն պէտք է համաձայնի՝ թէ հարկ համարելով աշխարհիկ լեզուաւ խօսելը՝ ո՛չ միայն անփառ է, այլ եւ շատ օգուտ է նորա համար գըրգեր եւս յօրինելը, մանաւանդ-որ գըրգի մէջը ըստ մեծի մասին աւելի բան կ'հասկանայ, քան թէ խօսակցութեան: Սորանից հետեւարար երեւում է թէ լուսաւորութիւնը եւ եւրոպական քաղաքականութիւնը անշուշտ միջնորդութեամբ աշխարհիկ լեզուին պիտի տարածուի մեր աղգի մէջ. եւ եթէ այդ հշմարիտ համարէ յարգելի հեղինակը՝ ուրեմն աներկբայ պիտի լինի նա, թէ աշխարհիկ լեզուի մշակումը այդ միջնորդութեան մէջն է, որովհետեւ դեռ եւս իրբեւ անդորք երկիր է:

«Պատմաց է» ասում է յարգելի հեղինակը. բայց միթէ յարգելի հեղինակի խօսակցական լեզուն ռամկա՞ց է, ո՛չ. բայց յայսնի է թէ գրոց եւս չէ. ուրեմն այժմեան ժամանակի համար կարելի է յարմարել մէկ այնպիսի եղանակ կամ ձեւ խօսելոյ ու գըրգեր եւս յօրինելոյ, որ գրոց լեզուի նըման աղգին անհասկանալի չլինելով՝ կարէ ռամկաց եւս չլինել, բայց ռամիկ ժողովրդոց բաւականապէս հասկանալի լինել: Այս գուցէ ծիծաղելով մեր վերայ՝ ասէ յարգելի հեղինակը՝ «Ոճո՛ղ այդ ձեւը լինի քո գրոյդ ձեւը, որոյ մէջը անդադար երեւում է մի եւ նոյն բառից զանազանակերպ հոլովմունքը եւ խոնարհմունքը, եւ որ ամենեւին զուրկ է այն գեղեցկութիւնից, որով գրոց լեզուն կարէ պարծիլ»: Այս պակասութիւնները մեք խօսավանում եմք. բայց եթէ հրամացէ յարգելի հեղինակը՝ փոքր ինչ կարեմք արդարանալ եւս ասելով թէ որովհետեւ աշխարհիկ լեզուն չունի սահմանաւորեալ կանոններ, ուրեմն նորա խօսրութիւնները հարկ է յանձնել ժամանակին, որ մեզ համար թերեւս անխմանալի հնարինք, մըշկելով այդ լեզուն, որպէս վերը ասացինք, նորա կանոնները եւս կ'բերէ սահմանի մէջ կ'զնէ. իսկ եթէ ո՛չ այդպէս՝ գուցէ՝ զօրացուցանելով մեր մէջը գրոց լեզուի տեղեկութիւնը՝ փոքր առ փոքր սովորական կ'շինէ մեղ համար վերջնոյս կանոնները»: Այս լեզուն, որով մենք գրում եմք եւ որով յարգելի հեղինակը խօսում է գրոց բառերից չէ բաղկացած արդեօք եւ նորա ձեւն չէ միայն յարմարացրած

ռամկաց խօսակցական ձեւին. եթէ միջնորդութեամբ այդ ձեւին աղգը կարող է փոքր ՚ի շատէ մեր խօսքը հասկանալ, կարող է նըմանապէս ընտելանալ փոքր ՚ի շատէ նաեւ մեր գործածած գրոց բառերին, եւ այս կերպիւ կարելի է նորա յոյսը կ'կատարուի՝ թէ գրոց բառերի հետ ընտելանալով՝ այդ լեզուի կանոնները եւ ձեւերը եւս կարեն երբեմն խօրդ չլինել նորա համար: Այս միաքի հաստատութեան համար եկէք տեսանեմք՝ թէ Զամկատանի մէջը, —ուր աւելի է գործածած աշխարհիկ լեզուն — ՚ի սկզբանէ մինչեւ ցայժմ այս գործածութիւնը վնասեց գրոց լեզուի տարածութեանը, այսինքն՝ եթէ աշխարհիկ լեզուն գիրքերի եւ օրագիրների մէջը գործածած չ'լինէին՝ գրոց լեզուի տեղեալքը աւելի կ'լինէին այժմ, թէ պակաս: Բայց մեր կարծեաց պակաս կ'լինէին, որովհետեւ գրոց լեզուաւ գիրքերը եւ օրագիրները չ'էին կարդալ եւ այդ կ'նշանակէ թէ ոչինչ չ'էին կարդալ իսկ կարգալով աշխարհիկ լեզուաւ գրած բաները, աւելի եւս ընտելացան գրոց լեզուին եւ շահաբեր համարեցին նորա ձիշդ ուսանելը: Չ'ից թէ թէ յարգելի հեղինակը կամենայ մեզ ցուցանել Վահիթարեանց միաբանութիւնը, որ առանց այդպիսի հնարից հասաւ գրոց լեզուի տեղեկութեան վերին աստիճանը: Սորա պատասխանը՝ ՚ի մերոյս կողմանէ այն է թէ նոքա լեզուի ուսմանը իրբեւ արուեստի պարապեցան. իսկ բոլոր աղգը ո՛չ կօշկակար կարէ լինել եւ ոչ դերձակ: Աթէ աշխարհիկ լեզուն չ'ունի գեղեցկութիւն, այդ կ'նշանակէ թէ նա չ'ունի գեռ կարօտութիւն գեղեցկութեան. այսինքն այդ լեզուաւ խօսողքը ուսումնասիրական կենաց մէջ չլինելով, դեռ եւս չ'ունին սովորութիւն խօսելոյ զանազան ուսմանց, զանազան գիւտից եւ կամ քաղաքագիտութեան վերայ: Արբոր այդ ամենայն բաները փոքր ՚ի շատէ կ'լսեմք նոցա վերանից՝ կ'տեսնեմք, որ նոքա նոյն լեզուաւ չ'էն խօսում, որովհետեւ էին խօսում. ուրեմն զարմանք չէ եթէ աշխարհիկ լեզուաւ գրութիւնք եւ յօրինուածք եւս այդ աստիճաններովլը ելանեն կատարելութեան, — ՚ի հարկ է եւ գեղեցկութեան վերին սամուղքը. ուղղախօսութեան կանոնները եւս, որք այժմ կան ամենայն խօսակցունց մէջ՝ այն ժամանակ կ'դաշնաւորին եւ կարեն առարկայ եւս լինել ուսման: Ուրեմն մեր այժմեան կենդանի աղգի համար հա՛րկ է մեղ արդեօք յետ վազել այն կանոնները ըմբանելոյ համար, որ մեռեալ սերնդոց կ'պատկանէին եւ որոց օտարալութիւնը այժմ աղգը կոր ՚ի գլուխ խօսավանում է: Յառաջ երթամք այլ լուսաւորեալ աղգաց նըման, որովհետեւ մեր յառաջումք եւս, որպէս տեսանում եմք, կան կանոններ եւ կարօտում են միայն կարգաւորութեան եւ դաշնաւորութեան. եթէ մեր խօսակցական

եկուն մեք չեմք ամուշիլ գործածեց՝ շուտով կ'տեսնեմք, որ ուղղախօսութեան, գեղեցկախօսութեան եւ քաղցրախօսութեան կանոնները կ'յայտնուին: Ավ թէ ի՞նչպէս գեղեցիկ կ'լինին այդ կանոնները, ի՞նչպէս կ'սիրէ նոցա մեր աղդը, որովհետեւ իւր կենդամի լեզուիցը կ'բզին, ի՞նչպէս իւր կեանքը կ'սկըսէ նորանցով զարգարեց՝ իրբեւ գեղեցիկ հագուստով: Եթէ այդ ամենայնը անընդունելի է յարգելի հեղինակին եւ անախորժ, ուրեմն նա սւելի պիտի հաւանի աղդիս այժմեան աննախանձելի դրութեանը, երբ-որ մեր եղբօրը կամ բարեկամին հարցնում եմք՝ ի՞նչու համար են միշտ այլազգի գիրքեր կարդում եւ հայերէն ոչինչ չեն կարդում՝ նոքա պատասխանում են մեղ՝ «Ի՞նչ կարգամք, որ ոչինչ չեմք հասկանում, օտարինը էլի փոքր-մոքր հասկանում եմք եւ կարգալով գոնէ խօսել եմք սովորում»: այսինքն՝ օտարի լեզուն սովորում են եւ հայինը մոռանում: Թա՛ղ յարգելի հեղինակը տեսնէ Անոկալի (ուր-որ ինքն է բնակում) բնակիչ հայերի գերդաստանք, որպէս եւ մենք տեսնում եմք Պետերբուրգի հայոց տուները, ուր ծնողք գեղեցիկ կ'խօսեն հայերէն, իսկ զաւակումք հաղիւ մէկ քանի բառ գիտեն, եւ հարցնելոյ ժամանակը յամօթոյ միայն ասում են՝ «խասկանում եմ»: Ավ թէ ազնուամիտ հեղինակի սիրտը չի ցաւում, խղճմլուանքը չի չարչարում այդպիսի խօսակցութիւնից: Անք եւս խոստովանում եմք՝ թէ այդ միաքը, այսինքն աշխարհիկ լեզուի գործածութեան հարկաւոր լինելը մերը չէ, եւ շատ ժամանակ չէ անցած, որ պատուելի հեղինակի նըման կ'ատէմիք մեր անհամ աշխարհիկ լեզուն: բայց շատ անգամ՝ խորհրդածութեանց մէջ լինելով այս սուարկայի վրայ եւ խօսակցելով այլոց հետ՝ տեսմիք-որ՝ այդ միաքը հըզօր է եւ նորա զօրութիւնը չի խոստովանողը յատկապէս չէ կարեկցում աղդի տղիտութեանը: որովհետեւ չէ կամենում նորա լուսաւորութիւնը: կարելի է այլով կերպիւ եւս ասել՝ թէ շատ բան աւելի է սիրում, քան թէ իւր աղդը:

Յարգելի հեղինակը կարէ ասել ոմանց հետ՝ ի միասին՝ թէ մեր աշխարհիկ բարբառը զանազան է այլեւայլ հայպդի ժողովը մուշ: Ճշմարիտ է: Բայց միթէ իրաւոնք է մեղ այժմ իսկ պահանջել, որ մեր Ուուսաստանի աշխարհիկ լեզուաւ գրած գիրքերը ամենայն երկրիներումը կարգան, երբ-որ մեղյացմինը է, որ դեռ Ուուսաստանի մէջ շատ չեն ընթերցողքը: իմկ եթէ նոյն Ուուսաստանի հայոց մէջ կայ զանազանութիւն, այդ տեսանում եմք Ուուսաց մէջ եւս, որ երբէք խափան չէ լինում մէկ լեզուաւ նոցա գիրքերը գրուելոյն: Ուրեմն՝ թող մեր գիրքե-

ըլ, որ Ուուսաստանի աշխարհիկ լեզուաւ կ'գրուին, մայն մեր ժողովուրդը կարդայ եւ սորա համար եւս կարեմք լիասիրո վառք Աստուծոյ ասել եւ հաւատացնում եմք յարգելի հեղինակին թէ երբ-որ Ուուսաստանի մէջ մեր գիրքերը ուրախութեամբ եւ բաւականութեամբ կ'կարդան՝ նոցա արժանաւորութիւնը չի թագուցուի օտար երկրացի հայ ժողովուրդից, — նոքա եւս կ'կարդան մեր գիրքերը, որպէս եւ մէք՝ նորանց գիրքերը: Աւ աչա՛ այս աղդ է բացում յաղթանակի հանդէսը, — ի՞նչոր նոցա գրուածոց մէջը մեղքաղցը եւ գեղեցիկ կ'երեւի՝ մէք կ'ընդունելի եւ գործ կ'ածեմք. այսպէս եւս օտարը մեր գիրքերի հետ կ'վարուին: Վպատակը ակներեւ է թէ փոքր առ փոքր կ'գամիք, եթէ ոչ միութեան, գո՞նէ այն աստիճանին, որ լաւ գիրքը, լաւ յօրինուածքը որ եւ իցէ երկրի՝ միօրինակ լաւ կ'լինին նոցա եւ մեղ համար: անկատկած պիտի լինիմք՝ թէ այդ յաջողութիւնը բաւական կ'օդնէ կանոնների եւ գեղեցիութեան համար եւս:

Արդարեւ կ'մեղանչէմիք, եթէ քարոզէմիք այժմ իսկ ուսումնարանաց մէջը աշխարհիկ լեզուն ուսուցանել: որովհետեւ այդ լեզուն չ'ունի գեռ եւս ուսանելոյ կամուններ, եւ ՚ի մանկութինէ գրոց լեզուն ուսանելով՝ մէք հասնում եմք այն նպատակին, որ ուամկի հետ խօսելոյ ժամանակը, թէ եւ յատկապէս նորանից լաւ եմք խօսում, նա կարողանում է իւր խօսակցութիւնը մեղ հետ շարունակել եւ ցանկանում է ինքն եւս լաւ խօսել: այս բանիս հաստատութիւնը կարող եմք գիւրաւ երեւաբերել շատ օրինակներով, որ կ'գտնեմք երկար չ'գեղեցերելով: Եթէ կ'հաւատայ յարգելի հեղինակը՝ թէ մէք անհաշտ թըշնամի չ'եմք գրոց լեզուին, կարեմք ասել՝ թէ այժմեան ժամանակի համար նա պիտի լինի իրբեւ հանք, որոյ միջից պէտք է գուրս-բերեմք ոսկի եւ արծաթ, որոց կարօտութիւնը զգում է մեր աշխարհիկ լեզուն: Գրոց լեզուի կամունաւոր եւ գեղեցիկը լինելը ամենէքեան ընդունում են: բայց արեօք մեր կեանքը մասնում է այդ լեզուի մէջը: Յարգելի հեղինակը եւ իւր պաշտօնակիցք այնպէս քաջ գիտեն մեր գրոց լեզուն, որ Ուուսաստանի հայկաններից մինն են, ուրեմն միմեանց հանդիպած ժամանակը ինչո՞ւ համար չ'են խօսում գրոց լեզուաւ, այդ չէ որ՝ նոցա կեանքը եւ վարքը եւս չ'տանում այդ լեզուին, եւ ժամանակը ինքը օտար է համարում նորան: Կամէի ասել եւս՝ թէ գրոց լեզուի գրի մէջ գործածութիւնը սովորութեամբ մնացած լինի մինչեւ ցայժմ կամ նոյն կարծեօք թէ գեղեցիկ է, աղդոյ է եւ. այլ ոչ անշառշտ հարկաւորութեամբ: Աւելորդ չ'եմք համարում այս տեղ բերել յարգելի

Ավավերգեանի երեւելի խորհրդածութիւնը այդ մասին, որ մեծ ըստ ձգումէ գրոց եւ աշխարհիկ լեզուաց վրայ, որի նըմանը մէք տակաւին չ'էիմք կարգացել հայոց գիրքերից ոչ մինի մէջ:

«Անհաստատ է մեր կարծիքն՝ իրո թէ բոլոր Հայաստանի Հայերն «մէկ ժամանակ խօսում ըլին էլել՝ մեր հինդերորդ դարու թարգմանիւշ աներու ու սրանց թարգմանած Աստուածաշունչ գրքի լեզուով: Կառարելի է հինդերորդ դարու Հայերն մեղանից հարիւրապատիկ աւելի «հեշտութիւնով էին հասկանում էն լեզուն, բայց խօսելով չ'են խօսել. «Էնդուր որ՝ ինչպէս հիմի, նայնպէս եւ ամեն ժամանակ ու ամեն ազգի «մէջ սովորելու է էլել գրաւոր կամ գրականական լեզուն: Թէ էլել է եւ «ժամանակ, որ ամեն Հայերն էլ խօսած ըլին էլել մէկ լեզուով էն էլ «Հայկի ժամանակին ու շատ շատ մէ երկու դար նրանից յետոյ: Ազգն «բազմանալով ցրվէլիս ու գաւառ գաւառ բովանդակվէլիս, հէնց էն դլուէն «համեմատ թէ աշխարհագրական, թէ կենցաղակարական հանգամանք՝ «ներու, ինչպէս տեսնում ենք եւս ուրիշ ազգերու մէջ, կամաց փոխած «պիտի ըլի իր մայր լեզուն, ու ժամանակով հարեւանիցն-էլ բան սովոր «լով պիտի նորան տրւած ըլի ամեն տեսակ նոր ձեւեր ու դարձուած «ներ էնպէս, որ լաւ որոշուել են գաւառական լեզուներն մէկ մէկուց: «Հայաստանու հնուց բազմալեզու ըլին՝ կարծիք չ'է: Խս գաւառական «բարբառներուց մէկն, կարելի է հէնց էն, որն որ աւելի կու լի պատ «հել իր մէջ մայր լեզուի յատկութիւններն, քուրմերու ձեռին, արքունա «եաց մէջ կամ նախարարներու դրանն աւելի գործ գնվէլով ու քաղաքա «կանութեան մէջ աճելով դառել է գրաւոր. ու գրվելով էնպէս կոկվէլ ու «հարստացել է ճոխ ձեւերով ու դարձուածներով, որ եւս նոյն դաւառի «բնակչից պահանջել է իրան հասկանալու ու բանեցնելու համար՝ իր «սովորին: Խսպէս մայր լեզուից կամ մէկ գաւառական լեզուից դպյացել «ու մեծացել է մեր գրաբառ ասած լեզուն, որոյ երանելի Վնարոսի մեր «նշանագիրներու գտնելուց շատ առաջ գրաւոր ըլին ամենին լաւ յայտնի է. էնդուր-էլ անկարելի է որ Ազաթանգեղի ու Սուրբ Գրոց վարպետ «ոչն՝ հեշտ հասկանալի ըլը ամեն չը սովորած ու անկիրթ, թէպէտ եւ «ժամանակակից Հայուն»:

Ա երջապէս յարգելի Հեղինակին քաջ յայտնի է թէ որքան սիրել եւ գովել եմք նորա ամեն մի շարադրութիւնը, որ մինչեւ այսօր լոյս ընծայուել են. ուրեմն գեղեցիկ գրոց լեզուաւ յօրինուածք անախորժ չ'են մեր ձաշակին. թուղ գրէ նա, որքան եւ կամի այդ լեզուաւ, բայց եւ

թուղ հաւատայ որ՝ աղքը, այսինքն ժողովրդոց բազմութիւնը, չի կարդալ նորա գրքերը, այլ միայն հանքերը կ'աւելանան: Բայց այս եւս թող իմանայ թէ ո՞րքան նըզովք, անէջք եւ զրաբարտութիւն հրատարակէ իւր գրքերի յառաջաբանութեան մէջը՝ նորա ամենայն ճկնութիւնը ունայն եւ անողը կ'լինին աղքի բերանիցը նորա լեզուն և լեզույ եւ կամ տպագրութեամբ չ'երեւելոց համար: Թուղ կասկածի՛ եւս յարգելի Հեղինակը՝ թէ չ'օգնելով ազգին իւր լեզուաւ նորա հետ խօսելովք, եւ նորա համար գրքեր գրելով՝ չ'իցէ թէ ումանց Պետերբուրգ եւ Վնակուա բնակող հոյոց նըման՝ իսպանուանայ իւր մայրինի լեզուն, այսպէս մէք ոչ թէ մեր գրոց Ճոխ լեզուն չ'եմք ստանալ, այլ եւ աղքատիկ աշխարհիկիցն եւս զուրկ կ'մնամք, ինչպէս որ պատահեցաւ Եկատոսն, Հունգարիա, Վրասրիա, Գրոբի եւ այլ շատ տեղ բնակող Հայերու հետ:

Առ իւր սիրելին:

Քաղցր սէրը սրտիդ մէջը ծըփալով
Երբ ինձ տեսար՝ դու ինձ քո կեանք կոչեցիր.
Անգին խօսքիդ ես զարմացայ խընդալով.
Վատաղ կեանքը յաւիտեան չ' իմացիր:

Ա մենայն բան գէպ՝ ի վերջն է արշաւում,
Թէ կամենաս կլրկին ինձ նոր տալ անոն,
Կերանք մի՛ տաս, որ մահուամբ է մեռանում,
Հոգի կոչիր — սիրոյս նըման անմահուն:

Գայլ, Գառն եւ Ռասոր:

(Առաջ)

Քուրդըստանի կողմում ապառաժ լեռնում
Մէկ անգութ գայլ սոված ու խիստ կատաղած
Մոլորեալ մէկ գառնի յետկիցն էր ընկած:
Ահարեկ խեղճ գառը խոր անձար վիճակում
Արդէն մօտ զգում էր՝ թէ եւ շուտ փախչելով,
Թշնամոյ ատամանց չարաչար խայթուածը,
Արդէն պարզ տեսնում էր մահարեր դիսուածը.
Որ յանկարծ մէկ տեղից քաջ որարդ վազելով
Վերայ ընկաւ նա գայլն եւ հզօր ձեռներով
Խորտակեց թշնամին շատ գաման խոցերով:
Որ գառի արխմն էր փափակում խըմելի
Խրը տեսաւ թափելով վէրքերից ցաւալի:
Հնորհակալ գառնուկը խոր փրկչի քամակից
Վազելաղ շտափեց դէպ ՚ի վրանն բարելից,
Ուտում էր, խըմում էր, քըմում էր սաղահով,
Եւ ոչինչ չարկած չէր անցնում նորա մտով,
Թէ կարէ հանդիպել ասպազոյ կենաց մէջ:
Բայց դու բնաւ մի՛ կարծիր՝ թէ բաղդն է միշտ անշէջ:
Մէկ օր վաղ վերկացաւ մէր պարոն որսորդը,
Բնոնեց գառին, որ մօտում միամիտ քըմած էր,
Վերառեց դանակը, որ վաղուց սրած էր,
Պատառեց անխընայ խեղճ գառնի մորթը:
Աղաղակ բարձրացուց տեսնելով վտանգը.
,,Իմարերար, գառն ասաց, խնայէ՛ իմ կետնքը
,,Որ երեկ փրկեցիր ահագին վտանգից:
,,Որ պառակ իմ վիճակ, ուր փախչիմ քու ձեռքից,
,,Որ այսօր ինձ համար ոչ թէ չէ աղատիչ՝
,,Այս եւ շատ գայլերիցն է աւել գիշատիչ՝

ԵՆՔՈՒՅՆՈՒՅՆ

Խնքուիդիցիան մի ժամանակ մէծ անուն ունէր Լատինագաւան ժողովրդոց եւ նոցա պատմութեան մէջ, որի նըպատակը որբան-էլ օգտավէտ չկարծուէր նորա հիմնագրազներին, բայց նորա ծաղման օրից մինչեւ այժմ հազարաւոր մարդիկ անիծում են նորա չար հետեւանքը, եւ միայն ներկայ դարումը կարող ենք աներկիւղ անաշառ դատաստան անել այդ քըմնութեան վերայ: Այս սարսափելի դատաստանի ծաղման պատճառը եղան Ալբորդոյացոց մարտերը, որոնք ՃՎ եւ ՃՎ դարերումը հարաւայեն Փրանսիան արխոնով լուացին *): Խննուկենտիոս Պապը սահմանեց Խնքուիդիցիան այն նըպատակաւ, որ նորանով հերքուին եկեղեցին նորա ամբաստանած անդամները: Առաջի անգամ Պետրոս Կատարենացին ստացաւ Խնքուիդիսորի գլխաւոր պաշտօնը, բայց միայն 1215ին ընկաւ նա կարգի կանոնի տակ, երբ-որ Առորդ Դամինիկոս ստացաւ գլխաւորի Խնքուիդիսորի պաշտօնական պատիւը: Թէ՛ եւ Խնքուիդիցիան Փրանսիաումը ստացաւ իր ծագումը, եւ թէ՛ եւ Ա. Լուգովիկ հովանաւորում էր նորան, բայց չի կարողացաւ այնտեղ հաստատ մընալ: 1221ին մտաւ Խտալիա, վորք ժամանակից յետ տարածուեցաւ Գերմանիա. բայց այստեղ-էլ մէծ յառաջադիմութիւն չ'ունեցաւ: Միայն Ապանիան էր, ուր-որ պինդ հաստատուեցաւ Խնքուիդիցիան եւ ստացաւ մէծ զօրութիւն: 1232ին մտաւ Աստալօնիա եւ տարածուեցաւ բոլոր Օներակղզիի ¹ մէջ:

*) Խնքուիդիցիաի վերայ աւելի տեղեակ եւ ընդարձակ ծանօթութիւն ունենալ ցանկացողին խորհուրդ ենք տալի կարգաւ Պալուաի այդ անուամբ շարադրութիւնը, որ գեղեցիկ եւ դիւրին աշխարհաբառ լեզուով թարգմանեցին մէր յարգելի աղդակիցները՝ պլո. Պատկանեանը (Ակրայէլ) եւ պլո. Կարենեանը.

¹ Օներակղզի ասվում է այնպիսի երկիր, որ երեք կողմից ջրով է պատած եւ միայն մի մասը կափած է ցամաք երկրի: Այստեղ Ապանիաի վերայ ակնարկած է:

Գրիգոր Ու կատարելապէս հաստատեց Խնքուիդիցիախ գոյութիւնը՝ տալով նորան ամսահման կարողութիւն եւ անկախութ որպէս եւ իցէ թագուորի իշխանութիւնից : Դոմինիկեան¹ կարդի ձեռին էր այդ պաշտօնը, որ նոքա այնպիսի ջերմեռանդութեամբ էին կատարում, որ կարճ միջոցումը բոլոր ժողովրդին աչ ու սարսափի մէջ ձեց: Փերդինանդ Քաթոլիկը² խիստ հավանաւորում էր Խնքուիդիցիախն, յուսալուոր պէտք եղած ժամանակը տէրուե զործերու մասին մեծ օդնութիւն կըստանայ նորանից: Աչա՛ այդ ժամանակ Խնքուիդիցիախն ասուեցաւ սուրբ արարողութիւն, կամ ինչպէս չայ լատինագաւաններն են ասում՝ Արաքննութիւն: Ընտրուեցաւ մեծ եւ ընդհանուր Քնիւ (Տօրուեմադան), որ իր ձեռի տակ ունէր Վերին ատեանը կամ խորհրդարանը, եւ քառասուն հինգ սոորադաս քննիչներ. այս քննիչը այնքան մեծ իշխանութիւն ունէր, որ կարողացաւ ներհակ երթալ Վիկատոս Եպապի կամացը եւ աղատակամ հալածում էր իր կատկածելի թշնամիներն: Տօրուեմադան առաջի անդամ խըստութեամբ յարձակեցաւ Առարիտանացւոց³ եւ չըէից վերայ. թէ եւ առ երես այդ հալածանաց պատճառը նոցա կրօնն էր համարում, բայց նորա գաղտնի խորհուրդը այն էր, որ ուղում էր կաղոպտել նոցա մեծ հարստութիւնը, որ ձեռք բերել էին այդ աղքերը իրանց հարտար արուեստով եւ առուտուրով .

¹ Քաթոլիկներու կրօնաւորները բաժանվում են զամազան ընկերութիւններով կամ կարդերով (ordo, օրդեն), որոնցից իւրաքանչ իւրը ունի իւր սերհական եւ առանձին կանոնները, ծէսերը, պարտաւորութիւնները, զգեստը եւ վերջապէս անունը, որոնցից երեւելիները դոքա են՝ Յիսուեան կամ Վղուիս, Դոմինիկեան, Յելեստինեան, Օգոստեան, Առարացիկ եւ:

² Ապանիացւոց թագաւորը եւ Խպարելայ դշխոյ: Դոցա թագաւորութեան ժամանակ Խրիստոփոր Կոլումբը գտաւ Ամերիկա աշխարը, որն-որ մինչեւ այն ժամանակ ոչոքի յայտնի չ'էր:

³ Առւրիտանացի կամ Առւրդ, Ափրիկախ հիւսիսային աղքերից մինը, որոնք 8 բորդ դարտւն տիրեցին Ապանիախն եւ 15 երորդումը կորցրին իրանց իշխանութիւնը եւ 1610ին Փիլիպառո Գ միանդամայն արտաքսեց նոցա այնտեղից:

տղէտ եւ մոլեռանդ քահանաները միւս կողմանէ շատ ամրանտանութիւններ անում էին այդ խեղձ ժողովրդի վերայ, որով կարողանում էին գրգռել մեծ Խնքուիդիտօրի կասկածը եւ բարկութիւնը: Եթ տեղումը հաստատ մնալու համար՝ Խնքուիդիցիախն չարձի գործի դարձաւ արքունի դրանը. ամեն հնարը ՚ի գործ գրեց հարրատացնել նորա դանձը. եւ իւր զզուելի նըպատակին համելու համար՝ ամեն եղեռնագործութիւնն ներելի էր համարում իրան. դատավարտեալներու ինչքը եւ հարստութիւնը կողապտում էր եւ տէրութեան դանձն էր դընում, նըմանապէս՝ ամեն կերպով աշխատում էր նուազացնել աղնուականաց զօրութիւնը: Բոլոր Ապանիա լցուեցաւ նորա անշէջ խարոյկներովը: Հատ չ'անցաւ վերայ՝ Պօրտուգալիա եւս մըտաւ այս արիւնախանձ ատեանը եւ այնտեղաց չընդկատան եւ Ափրիկա: Անչնարին է առանց սարսափելու լսել այն գործերը, որ կատարուեցան Անգլիկախ, Պիերուի եւ Գովախ մէջ. ամեն տեղ դատավարտեալներուն այրում էին եւ նոցա կայանքը արքունի դանձն էին դընում: Եթէ հաւատանք պատմութեանը՝ միայն Տօրուեմադափախ կառավարութեան ժամանակ հարիւր հազար մարդ զահ եղան այս գարշելի քընութեանը: Խնքուիդիցիախ դատաստանը միանդամայն տարբեր էր քաղաքական դատաստանից. ամբաստանողի անունը չ'էր յայտնրվում թշուառ ամբաստանեալին, բանդարգելութիւնը միշտ թագուն էր կատարվում. ամբաստանողին երբէք դէմուդէմ չ'էին կանգնայնում եւ անաշառ դատաստան անում, քսուն եւ մատնիչը մեծ վարձ էին ստանում դատաստանից. Խեղձ զոհին կըստանքով ստիպում էին խոստովանել իւր յանցանքը. եւ եթէ պընդութեամբ հաստատէր եւ ասպացուցանէր նա իւր անմեղութիւնը՝ դատավարտվում էր ինչպէս յանցաւոր. իսկ եթէ խոստովանէր իւր մոլորութիւնը եւ ապաշխարէր՝ դարձեալ փրկութիւն չ'էր ստանում. — նորա ինչքը մըտնում էր արքունի դանձարան եւ ինքը յաւիտենական բանդարգելութեան էր դատավարտվում. ինքը, իւր որդիք եւ թոռունք պիղծ էին համարվում. բայց ՚ի գորանից՝ հաղցնում էին նորան Ան-Բէլուտո եւ ստիպում էին ոտարաց մարացկանութիւն անել: Բայց երբ-որ ամբաստանեալը մահի էր դատավարտվում՝ այն ժամանակ պատրաստում էին նորան հանդիսաւոր առւտօ-դա-ֆէի, որ սովորաբար կատարուում էր Առար Խրբորդութեան տօնի եւ չողերալստի մէջ: Ամսդիսաւոր ծէսը այսպէս էր լինում. առաջից գնում էր Դոմինիկաց դասը Խնքուիդիտօրի գրոշակով, նորանից յետոյ դալիս էին թշուառ դատավարտեալները սան-բէնուտո հաղած եւ բորիկ

ոտով, դոցանից յետոյ քահանայք եւ միանձոնք : Այս հանդիսաւոր ժամփօրը անցնում էր քաղաքի երեւելի վողոցներից եւ հանում էր մինչեւ եկեղեցի, ուր կարդում էին ատենի դատավճիռը եւ ասում էին քարոզ, որից յետ դատապարտեալներուն աւանդում էին տէրութեան դարով, որ նոցա ձեռերը ու ոտերը շղթայած տանում էր պատժելու տաստանին, որ նոցա ձեռերը ու ոտերը շղթայած տանում էր պատժելու տեղը : Ովոր յօժարում էր քաթօլիկ մեռնել՝ նորան առաջ խեղում էին եւ յետոյ խարոյկի վերայ այրում էին. ապա թէ ոչ կենդաւոյն այրում էին. Անուելաները անգամ չ'էին աղասիլում այս սոսկալի դատաստանից, նոցա ոսկորները զնում էին դագաղի մէջ եւ այրում էին այդ հանդեսաւոր օրը : Այս քանի պապեր ուղացին՝ եթէ ո՛չ միանգամայն բնաջինջ անել Խնդուիդիցիան, գո՞նէ փոքր ինչ ամոքել նորա Խըստութիւնը, բայց նոցա ցանկութիւնը սնկատար մնաց, պատճառո՞ր Կարոլոս Ա եւ Փի-լիալոս Բ, նորա որդին, Խնդուիդիցիաի ջերմեռանդ պաշտպաններն էին : Երբ-որ Խնդուիդիցիան մըտաւ Ատորին-Վահանգները (Վիդէլանդիա) ժողովուրդը իսկոյն ոտքի-ելաւ եւ ապատամքեցաւ. Ապանացւոց թագաւորի գէմ, եւ այդ էր գլխաւոր պատճառը, որ Ապանիա կորցրուց այդ չարուստ եւ ծաղկած երկիրը : Բայց երբ-որ լուսաւորութիւնը առաւել եւ առաւել տարածուեցաւ ժողովրդի մէջ Խնդուիդիցիան-էլքանի գնաց թուլացաւ, եւ վերջի ժամանակները հազիւ երբէք կատարվում էր առա-տո-դա-ֆէն : Ա երջապէս երբ-որ Վասովէն տիրեց Ապանիաին 1808 թուին՝ Վոյեմբերի հին միանգամայն ջնջեց Խնդուիդիցիան : Ուշ եւ թուին Ֆերդինանդ ուղաց նորոգել, բայց նորա ճիգը եւ աշխատանքը ՚ի գերեւ ելան :

Վանքալէպ:

— Տղօ՛, համամ տեսալըս:
» Ըմբօ՛ խի՛ կերալ չըլ:

— Հունց ա:
» Հունցա խողու բօզ:
— Բա, քծնահօր, տղէն խողալ
տեսալ չըլ:

— Այս տղաց, բաղնիս տեսել ես:
» Ո՛չ թէ տեսել եմ; այլ եւ կե-
րել եմ:

— Ի՞նչովէս է:
» Խողի եղջիւրի է նըման:
— Օրչնեալը խողէլ չի տեսել

Պայրաքաղաքումը կրթած և աղջիկ :

Ծուշան՝ շուտով դէմքը ծածկէ՛, ձիւն դու՝ թուի՛ր մըրոսած,
Տե՛ս, սիգաձեմ ման է գալիս և աղջիկն մեր կրթած.
Վարդի դոյնը յշի ու մօքած ու մօքած ու մօքած ու մօքած:
Այս տեղումը ելքնակ է գիտի՛ համ աղջկունք, համ կնանիք:
Խնչ է գաղտնին ելքնակ ու մօքած ու մօքած ու մօքած:
Ակայն կ'ասեն որ շատուց է կաւիճն ունի բարձր գին:

Առաւոտ է. մեր աղջիկը հայլիից չի հեռանում; —
Կորա ծընողք այնօր ճաշի գարդեց՝² են սպասում:
Գարդեց՝ է, լս'ւ միտք-արէք, և այ չէ անշնորհ ու տըգէտ,
Գարդեց՝ է փայլուն շըրով, ուսին զըրած զոլետ՝³:
Տուն կըմանի, գըլուս կըտայ այնպէս սիրուն, շնորհաշուգ,
Որ մեր կրթած և աղջիկ սիրու կ'անէ տու! տու! տու!⁴
Խնտուր համար նա հայլիից օրն ՚ի բուն չի պուկ-գալի:
Գարդեցին դուր չի գալը խիստ է նորա զգալի:
Ոչ լոկ դէմքով պիտի դուր-գայ, այլ եւ անոյշ խօսքերով,
Խնչպէս, ի՞նչ կերպ, դուք կը հարցնէք, այդ-էլ չ'գիտէ ոչով:
Բարձի տակը պահած ունի նա George-Sandի⁵ րոմանը⁶:
Գիշերները մօրից թագուն կարդում է մինչ չորս ժամը:
Անհատական այդ աղջիւրից նա քամում է անդադար:
Կիրոյ զգացմունք, սիրոյ խօսքեր — կանանց սրտին մըխիթար:
Կա գըտաւ իր ուժալը⁷, սյսօր ճաշին կըտեսնէ:
Կոր դեռ անտես սիրահարին, ումո՞ր սիրու տուել է:

¹ անսովոր է. աւելի ընտրելին է դեղին դէմքը: ² թիկնապասպաց: ³ ուսապիր: ⁴ թը՛փ թը՛փ (միջարկութիւն): ⁵ Երեւելի կին Ակա-պասան Փրանսիացի: ⁶ Այս նորա սուտ անունն է. ⁷ Դիւ Դէվան է նորա խսկական անունը:

Հայոց աղջիկ, Հայոց աղջիկ, գլնա՛ առաջ, մի՛ վախիլ,
Ելեանի դէմքըդ, շինծու խօսքըդ ովէնս-ասես չ'են խարիլ
Գարեեցին դուր չ'ես գալի, — ի՞նչ ափսոսանք, ի՞նչ վրնաս,
Քեզ սիրահար հյօստ'¹, ունտ², արտիլերիստ³ կ'ունենաս.
Դու փորձ փորձէ նորից դուր-գալ, անոյշ ժպտա՛ ու խօսէ՛,
Քըսան մէկըդ արդէն մօտ է, տե՛ս, առաջիդ մեծ փոս է.
Ինյոց մի՛ թողնիլ դու George-Sandին, իдеալիդ մ'ուրանալ,
Ուէ ո՛չ ջահիլ, գոնէ ծերուկ կ'առնու քեզ ուռս գեներալ⁴.
Ինյոց գգուշացիր դու Հայերից, գին չ'են դլնիլ, չ'են սիրիլ
Քեզ, ինչպէս դու ցանկանում ես. դու քեզ Հային մի՛ մասնիլ:

Փորձ փորձեցիր ու դուր-չ'եկար ոչ հյօստ'⁵, ունտ'⁶,
Քըսանհինդըդ մօտենում է. Հայ աղջիկ՝ վա՛յ քու հալին:

Հայոց աղջիկ, Հայոց աղջիկ, գլնա՛ առաջ մի՛ վախիլ,
Ելեանի դէմքըդ, շինծու խօսքըդ ովէնս-ասես չ'են խարիլ
Տարիներըդ ակօս ձրգեց քու շնորհալի երեսին, —
Վընաս չիկայ՝ ոքրցէներըդ դորա համար ձար ունին:
Արբ-որ տանն ես՝ մի՛ հրամայիլ տըզոց քեզի մօտենալ,
Դուրս գլնալիս՝ լիկ նիդ ձրգէ՛ դու կրկնածալ հաստ վայլ⁷,
Հարցնօղներից ուշի ուշով ծածկէ՛ տարիդ ծընդնդեսն,
Ու ամենին հաւատացուր, թէ տասնութ ես տարեկան:

^{1, 2, 3} զանազան դունդերու դօրականներ են: ⁴ Հաղարապետ: ⁵ ընկերու: ⁶ դէմք, երես: ⁷ քոզ:

Печатать позволяет съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ. С. Петербургъ, февраля 8 дня 1857 года.


Цензоръ Н. Лажечниковъ.



ՉՈՐԲԱՐԴ

ՅԱՌԱՀԱՄԱՐԻ պարունակութիւնը .

— Ճարի Խրառ	4
Լեզուի համար ինչ օդուտ ունի թարգմանութիւնը .	3
Madonna	4
Հարուսալ-Պաշիդ	6
Տոգենբուրգ (Պարերգութիւն)	8
Հայոց Պատմութիւն (Հայկ)	11
Ուսանող (Երգ)	17
Սաշարհարառ լեզու	18
Սու իւր սիրելին	25
Գայլ, Գառն եւ Որսորդ (առակ)	26
Խնձուիդիցիա	27
Վանքավէստ	30
Վայրաքաղաքումը կրթած Հայ աղջիկ	31



ՀՀ Ազգային գրադարան



NL0685893

1-17-3